

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հռոմի Եպիսկոպոս, կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ Պողոս Զ-ը և Ամենայն Հայոց կաթողիկոս ու Ծայրագույն Պատրիարք Վազգեն Ա-ն գոհունակություն են տալիս Տիրոջը, որ հնարավորություն տվեց իրենց աղոթելու միասին, հանդիպելու միմյանց և փոխանակելու խաղաղության սուրբ համբույրը, մանավանդ այն շրջանում, երբ քրիստոնեական եկեղեցիները նախապատրաստվում են նշելու առաքյալների վրա սուրբ Հոգու իջման մեծ տոնը:

Գիտակից իրենց հովվապետական պարտականություններին՝ նրանք հրավեր են ուղղում բոլոր քրիստոնյաներին և հատկապես կաթոլիկ եկեղեցու և Հայաստանյայց առաքելական եկեղեցու զավակներին՝ առավել հավատարմությամբ պատասխանելու սուրբ Հոգու կոչին, որը մղում է նրանց դեպի առավել խոր միություն, մեր բոլորի Փրկչի կամքի համաձայն, և որը առավել բեղմնավոր կդարձնի քրիստոնյաների ծառայությունը աշխարհին»:

Այդ միությունը կարող է իրականացվել այն դեպքում միայն, երբ բոլորը՝ հովիվ և հավատացյալ, իրոք ձգտեն ճանաչել միմյանց: Այս նպատակով նրանք հորդորում են աստվածաբաններին ներգրավվելու մի համընդհանուր ուսումնասիրության, որը ձգտի խորացնել նրանց ծանոթությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խորհրդի և նրանով եղած հայտնության մասին: Հավատարիմ առաքյալների և եկեղեցու սուրբ հայրերի կողմից փոխանցված ավանդությանը և, միաժամանակ, գիտակից մեր ժամանակաշրջանի նոր զարգացումների մեջ Աստծուն որոնող մարդկային աշխարհի առա-

ջադրած պահանջներին՝ նրանք պիտի կարողանան բաց անել նոր ճանապարհներ, որոնք պիտի թույլատրեն հաղթահարել դեռևս գոյություն ունեցող տարակարծությունները և, աշխարհի դիմաց, իրենց եկեղեցիները պիտի հասցնեն, իրենց հավատի դավանությամբ, դեպի առավել կատարյալ միություն: Պապը և Կաթողիկոսը, իրենց կողմից պիտի փորձեն հնարավոր ամեն ինչ անել՝ օժանդակելու այդ ջանքերին և նրանց տալու իրենց հովվապետական օրհնությունը:

Սակայն միության որոնումն ինքնին ենթակա է ապարդյուն մնալու վտանգին, եթե այն չի արմատավորված ամբողջ եկեղեցու ամբողջ կյանքում: Դրա համար էլ նրանք ցանկանում են, որ առավել սերտ մի համագործակցություն զարգանա քրիստոնեական կյանքի հնարավոր բոլոր բնագավառներում: Հասարակաց աղոթքը, փոխադարձ հոգևոր օգնությունը, այսօրվա աշխարհի հարցերին ճշմարտապես քրիստոնեական լուծման սկզբունքներ գտնելու նպատակով գործադրվող միացյալ ջանքերը թանկագին միջոցներ պիտի լինեն այնքան ցանկացված ամբողջական միության այն որոնման ծառայության համար:

Միասնաբար կատարվող այս որոնումը, այս գործակցությունը պետք է հիմնված լինեն քրիստոնեական հասարակաց հավատի և հասարակաց խորհրդական կյանքի փոխադարձ ճանաչման, անձանց և նրանց եկեղեցիների փոխադարձ հարգանքի վրա: Եթե այն անշահախնդիր ջանքերը, որ նրանք ի սրտե կցանկանային առաջ մղել, ներշնչված լինեն այս ոգով և ի գործ դրվեն այս ձևով, նրանք վստահություն ունեն, որ ճշմարտության և սիրո Հոգին կաթողիկ եկեղեցու և Հայաստանյայց առաքելական եկեղեցու անդամներին պիտի տա ճշմարտապես քրիստոնեական այն եղբայրությունը, որը նրանց մեջ այդ հոգու ունեցած գործունեության արգասիքն է:

Հանուն այս եղբայրության է, որ Պողոս Զ Պապը և Վազգեն Ա կաթողիկոսը բարձրացնում են իրենց ձայնը մի հանդիսավոր կոչի մեջ՝ ուղղված բոլոր նրանց, որոնք ազդեցություն ունեն ազգերի և ժողովուրդների կյանքի վրա, այն նպատակով, որ նրանք ջանան փնտրել և գտնել բոլոր հնարավոր միջոցները՝ վերջ տալու պատերազմներին, ատելությանը, ֆիզիկական և բարոյական բռնությանը, մարդու կողմից մարդու հանդեպ կատարվող ամեն մի ճնշման:

Նա, որ մեր Խաղաղությունն է, թող այնպես անի, որ այս կոչը լսելի լինի:

Վատիկան, 12 մայիսի 1970 թ.

ՊՈՂՈՍ Զ ՎԱԶԳԵՆ Ա